

ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ

Ա. Հարությունյանին

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանջնաժողովի

նախագահ Ռ. Նազարյանին

Երևանի քաղաքապետ

Տ. Մարգարյանին

Մույն թվականի հոկտեմբերի 17-ին մեր կազմակերպություն է դիմել Երևան քաղաքի բնակիչ և «Երևան Ջուր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) բաժանորդ Վահան Մուրադյանը՝ իրավական օգնություն ստանալու ակնկալիքով:

Համաձայն քաղաքացի Մուրադյանի դիմումի և ներկայացված փաստաթղթերի՝ դեռևս ս.թ. սեպտեմբերին նրա խմելու ջրի սպասարկման գիծը, որը գտնվում է իր բնակելի տնից դուրս, վթարվել է և ինքը դիմել է Ընկերության թեժ գծին՝ խնդրելով վերացնել վթարը, սակայն Ընկերությունը հրաժարվել է այն վերացնել, պատճառաբանելով, որ այն իր պարտականությունների մեջ չի մտնում և առաջարկել է ինքնուրույն հոգալ վթարի առաջացման պատճառներն ու հետևանքները վերացնելու աշխատանքներն ու ծախսերը: Մերժում ստանալուց հետո քաղաքացի Մուրադյանը մի քանի անգամ բողոք է ներկայացրել Ընկերությանը և պահանջել, որպեսզի Ընկերությունը պահպանի և կատարի իրենց միջև 17.04.2012թ. կնքված «Խմելու ջրի մատակարարման ծառայությունների մատուցման պայմանագրի (12 1/8 6-49-0-0-105)» 2.2.2 և 3.1 կետերի պահանջները: Համաձայն որի՝ ջրամատակարարի ու բաժանորդի ջրամատակարարման համակարգերի «սահմանազատման կետը» համարվում է ջրաչափի և/կամ բաժանորդի ներքին ցանցում տեղադրված ջրաչափերի գտնվելու վայրը: Սակայն Ընկերությունը հրաժարվել է և չի ընդունել այն հիմնավորումը, որ «սահմանազատման կետը» դա ջրաչափի տեղադրված կետն է և փորձել է մեկնաբանել յուրովի, դրանով խուսափելով պատասխանատվությունից: Արդյունքում, դիմումատու-բաժանորդը նյութական վնաս է կրել և իր ֆինանսական միջոցներով վերացրել վթարը:

Իհարկե, դիմումատու-բաժանորդ Վ. Մուրադյանն արդեն իսկ վերացրել է վթարը և վերականգնել իր ջրամատակարարումը, սակայն նա շարունակում է պնդել, որ Ընկերությունը բացահայտ խախտում է հազարավոր բաժանորդների իրավունքները և չի կատարում իր վրա դրված պարտավորությունները:

Այսպիսով, հիմք ընդունելով դիմումատու Մուրադյանի բողոքը և ուսումնասիրելով նրա վերը նշված պայմանագիրը, Ընկերության գրությունները, ՀՀ կառավարության 22.01.2004թ. հ. 130-Ն որոշումը, ինչպես նաև ունենալով նման բովանդակության բողոքներ այլ քաղաքացիներից, հանգում ենք այն եզրակացության, որ ջրամատակարարող ընկերությունն իրոք իր պարտավորությունները չի կատարում ՀՀ կառավարության որոշման և պայմանագրին համապատասխան, յուրովի մեկնաբանելով և իմպլիմենտացիա անելով դրանց պահանջները, մոլորության մեջ է զցում հազարավոր բաժանորդների:

Օրինակ՝ Ընկերությունը դիմումատու-բաժանորդին ուղղված գրություններում նշում է, որ ՀՀ կառավարության 22.01.2004թ. հ. 130-Ն որոշմամբ «սահմանազատման կետը» նշված է լինում տվյալ հասցեի սեփականատիրոջ դիմումի հիման վրա ջրամատակարար կազմակերպության կողմից տրամադրված տեխնիկական պայմաններում:

Հարց է առաջանում, թե ի՞նչ տեխնիկական պայմանի մասին է խոսքը և ինչու՞ որևէ բաժանորդ դրա մասին տեղյակ չէ: Ի դեպ, և՛ դիմումատու-բաժանորդը, և՛ որևէ այլ բաժանորդ չունեն նման տեխնիկական պայման, որն էլ կհամարվեն իր և Ընկերության միջև կնքված պայմանագրի բաղկացուցիչ մասը: Նույնիսկ դրա մասին նշված չէ նաև Պայմանագրի «Լրացուցիչ պայմաններ» բաժնում, որպեսզի բաժանորդը տեղեկացված լինի, որ վթարների առաջացման կամ առկայության դեպքում Պայմանագրի կողմերը առաջնորդվելու են այդ տեխնիկական պայմանով և որով է հստակ սահմանված «սահմանազատման կետը»:

Չնայած, ՀՀ կառավարության 22.01.2004թ. հ. 130-Ն որոշմամբ հստակ տրված է «սահմանազատման կետի» հասկացությունը (ջրամատակարարի ու բաժանորդի սեփականությունը հանդիսացող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի պատկանելության բաժանման կետ), իսկ այդ նույն որոշմամբ հաստատված օրինակելի պայմանագրի 3.1 կետում սահմանված է, որ «Բաժանորդին մատակարարված ջրի ծավալը հաշվարկվում է ջրամատակարարի և բաժանորդի ջրամատակարարման

համակարգերի սահմանազատման կետում տեղադրված ջրաչափի և (կամ) բաժանորդի ներքին ցանցում տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա»: Այսինքն, այստեղից էլ հետևություն, որ ջրաչափը, որպես չափման և տարանջատման գործիք, որոշիչ դեր է կատարում «սահմանազատման կետի» որոշման հարցում:

Ինչև, մեր կարծիքով, ճիշտ չէ քաղաքացի-բաժանորդին տալ հայեցողական լիազորություններ, ինքնուրույն որոշելու թե որտեղ պետք է լինի «սահմանազատման կետը», ավելին՝ անընդունելի է նաև քաղաքացի-բաժանորդին տալ «ինքնիրավչության» հնարավորություն տնօրինելու իր բնակելի կամ հասարակական շենքից դուրս գտնվող ցանցերը: Յուրաքանչյուր բաժանորդ ինչպես ցանկանում է, այնպես էլ կատարում է իր շինություններից դուրս գտնվող վթարված ջրագծի վերանորոգման աշխատանքները:

Ջրամիացման և ջրահեռացման արտաքին ցանցերի վերանորոգումը չպետք է լինի բաժանորդի պատասխանատվության ներքո, մատակարարող ընկերությունը հենց դրա համար է կոչված, որպեսզի արտաքին միջամտությունն արգելի, որպեսզի մշակի և իրականացնի միատեսակ քաղաքականություն, ցուցաբերի հավասար մոտեցում, եթե առկա չեն տարբերակման մոտեցում: Օրինակ եթե վթարը առաջացել է բաժանորդի մեղքով՝ իր ներքին ցանցերում, հետևաբար դա բաժանորդի խնդիրն է այն լուծելու, բայց եթե այն շինությունից դուրս է, պետք է լինի բացառապես մատակարարող ընկերության պարտականությունը:

Մեր կարծիքով, հնարավոր է հարցին լուծում տալ գազամատակարար-սպառող հարաբերությունների օրինակով, օրինակ բաժանորդը լրացուցիչ ծառայության գումար է տարեկան վճարում ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համար: Միգուցե այս ոլորտում ևս մշակվի մի մեխանիզմ, ըստ որի ջրամիացման և ջրահեռացման արտաքին ցանցերը պարբերաբար վերահսկվեն մատակարարող ընկերության կամ այլ մասնագիտացված կազմակերպության կողմից, իսկ քաղաքացի-բաժանորդն էլ թղթաբանության ետևից չընկնի, որպեսզի իր միջոցների հաշվին հողային աշխատանքները սկսելուց առաջ դիմի վարչական շրջան շինարարական աշխատանքների կատարման համար թույլտվություն ձեռք բերելու համար: Նկատեք, թե որքան ժամանակի ու ջրի կորուստ ենք ունենում այդ ողջ ընթացքում, մինչև որ ձեռք բերվի այդ թույլտվությունը: Ինչն էլ իր հերթին իր մեջ կոռուպցիոն մեծ ոիսկ է պարունակում այդ ամենը շատ արագ կազմակերպելու համար:

Բայց քանի որ սույն հարցն արդեն տարաբնույթ ընկալման և մեկնաբանման տեղիք է տվել և գնալով ավելի տարածական բնույթ է կրում, հետևաբար անհրաժեշտ էմ համարում դիմել և խնդրել Ձեզ Ձեր կողմից ղեկավարվող կառույցում անհապաղ քննարկման առարկա դարձնել սույն հիմնախնդիրը, մասնավորապես ՀՀ կառավարության 22.01.2004թ. հ. 130-Ն որոշմամբ սահմանված «սահմանազատման կետի» որոշման մասին դրույթը և ջրամատակարարում իրականացնող ընկերության լիազորությունների շրջանակի որոշման հարցերը և գտնել խելամիտ լուծումներ:

Լ. Ներսիսյան

«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ գործադիր տնօրեն

19 Հոկտեմբերի, 2016թ.

Ե-2470, Ե-2471, Ե-2472